# ԵՐԿԱՐՕՐՅԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

## ՄԱՅՐԵՆԻ / V ԴԱՍԱՐԱՆ

**Ուսուցիչ՝ Նարինե Գալստյան**

**2023_2024 ուստարի**

| Ժամ | Թեմա | Նպատակ | Վերջնարդյունք |
|---|---|---|---|
| 1 | Մեսրոպ Մաշտոցը և հայերեն տառերի ծնունդը<br>էջ 6-7 | **Ծանոթացնել** Մաշտոցի կյանքին ու գործունեությանը և հայոց գրերի ստեղծման պատմությանը: | **Արժևորի** գրերի գյուտը:<br>**Գնահատի** Մեսրոպ Մաշտոցի և գրերի գյուտի դերը հայ ժողովրդի կյանքում: |
| 2 | Նախադասության տեսակները՝ ըստ կազմության<br>էջ 30 | **Նպաստել** նախադասության տեսակներնըստ կազմության ընկալելուն: | Տեքստում **ճանաչի** պարզ և բարդ նախադասությունները,<br>**կազմի** համապատասխան նախադասություններ: |
| 3 | «Անտառի տնակը» հեքիաթի բովանդակությունը և գաղափարը:<br>էջ 33-34<br>Պարզ և բարդ նախադասություն | **Նպաստել** հեքիաթի բովանդակությունն ընկալելուն:<br>**Ծանոթացնել** պարզ և բարդ նախադասությունների կառուցվածքին:<br>**Օգնել** հասկանալու պարզ և բարդ նախադասությունների կառուցվածքային տարբերությունները | Արտահայտիչ **կարդա** հեքիաթը:<br>«Անտառի տնակը» հեքիաթի բովանդակությունը **վերաշարադրի** համառոտ:<br>Տեքստում **գտնի** պարզ նախադասությունները: |

| | | | |
|---|---|---|---|
| | էջ 30 | | |
| 4 | Պարզ համառոտ և պարզ ընդարձակ նախադասություններ<br>էջ 30 | **Օգնել** հասկանալու պարզ համառոտ և պարզ ընդարձակ նախադասությունների կառուցվածքայինտարբերությունները: | **Կազմի** պարզ համառոտ նախադասություններ և **դարձնի** պարզ ընդարձակ: |
| 5 | Հնչյունաբանություն:<br>Հայերենի հնչյունները:<br>էջ 36-37<br>Ձայնավոր հնչյուններ<br>էջ 42 | **Ծանոթացնել** հայերենի ձայնավոր հնչյուն-ներին: | Տեքստի ընտրված հատվածում **գտնի** ձայնավոր հնչյունները, այդ ձայնավորներով **կազմի** նոր բառեր: |
| 6 | Բաղաձայն հնչյուններ<br>էջ 47 | **Ընկալելի դարձնել** ձայնավորների և բա-ղաձայնների տարբերությունները: | Տեքստում **գտնի** բաղաձայն հնչյունները: Այդ բաղաձայններով **կազմի** նոր բառեր: |
| 7 | Գիտելիքի ամրակայում. ձայնավոր և բաղաձայն հնչյուններ:<br>Ուսուցանող գրավոր աշխատանք | | |
| 8 | Ի՞նչ է առակը<br>էջ 54<br>Եզոպոս, «Եղջերուն և խաղողը»առակը:<br>էջ 55 | **Ուսուցանել** առակի ժանրային առանձ-նահատկությունները:<br>**Ծանոթացնել** արձակ և չափածո առակների տեսակներին: | **Մեկնաբանի** առակի ժանրային բնութագիրը և ձևավորմանլեզվական առանձնահատկությունները:<br>**Մեկնաբանի** առակի կառուցվածքային առանձնահատ-կությունները: |

| | | | |
|---|---|---|---|
| | | | **Ներկայացնի** առակի տեսակները և կառուցվածքը:<br>**Բացատրի** տվյալ առակին բնորոշ այլաբանությունը և բարոյախոսությունը:<br>**Տարբերի** արձակ և չափածո առակները, նրանց բնորոշ առանձնահատկությունները: |
| **9** | «Եղջերուն և խաղողը» առակի հերոսների բնութագիրը և բարոյախոսությունը:<br>էջ 55<br>Հնչյուն և տառ<br>էջ 36 | **Ընկալել տալ** առակի այլաբանությունը որպես գրական հնարք:<br>**Ծանոթացնել** հնչյուն և բառ հասկացությունների գրության և արտահայտության առանձնահատկություններին: | **Բացատրի** «Եղջերուն և խաղողը» առակի բարոյախոսական նշանակությունը, նրան բնորոշ լեզվաոճական հնարները:<br>**Ճանաչի** հայ և օտարազգի նշանավոր առակագիրներին և<br>**համեմատի** նրանց ստեղծագործությունները:<br>**Հորինի** առակ՝ հաշվի առնելով ժանրային առանձնահատ-կությունները:<br>Տեքստում **գտնի** և **ապացուցի** տառի և հնչյունի գրության արտասանության տարբերությունը: |
| **10** | Վարդան Այգեկցի, «Բարին ուչարը» առակը:<br>էջ 58-59<br>Բառ և վանկ<br>էջ 60-61 | **Նպաստել** առակի ընկալմանը:<br>**Ձևավորել** բառի վանկային և հնչունային կառուցվածքը ճանաչելու ունակություն: | **Բացահայտի** առակի վերնագրի և բովանդակության կապը:<br>**Բացատրի** վանկի դերը գրավոր խոսքում: Արտահայտիչ **կարդա** առակը: |
| **11** | «Բարին ու չարը» առակի բովանդակությունը և գաղափարը: էջ 58-59<br>Միավանկ բառեր<br>էջ 60-61 | Ծանոթացնել «Բարին ու չարը» առակի բովանդակությանը:<br>**Նպաստել** միավանկ բառերը բազմա-վանկից տարբերելուն: | **Պատմի** առակում ներկայացված պատմությունը հերոսներից մեկի բերանով: **Կողմնորոշվի** տեքստի իմաստային բովանդակության մեջ և **կարողանա պատասխանել** դասագրքում զետեղված հարցերին: Տեքստից ընտրված հատվածում **ցույց տա** միավանկ բառերը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |
| 12 | «Բարին ու չարը» առակի կերպարները և բարոյախոսությունը:<br>էջ 58-59<br>Բազմավանկ բառեր<br>էջ 60-61 | **Ծանոթացնել** բազմավանկ բառերի առանձնահատկություններին: | Տեքստից **առանձնացնի** հերոսներին բնութագրող դեպքերը, բնության պատկերները նկարագրող բառերն ու արտահայտությունները:<br>**Բացահայտի** նրանց վերաբերմունքը շրջապատի նկատմամբ: Տեքստում **գտնի** և **ցույց տա** բազմավանկ բառեր: |
| 13 | Բաց և փակ բառեր: | **Ծանոթացնել** բաց և փակ վանկերի կազմությանը, բառերի վանկատման սկզբունքներին:<br>**Ուսուցանել** վանկը և դրանով պայմանավորված շեշտադրությունն ու տողադարձը:<br>**Ամրապնդել** վանկի մասին ունեցած գիտելիքները: | **Բացատրի** վանկի ոճական արժեքը և նշանակությունը:<br>**Մեկնաբանի** վանկարար հնչյունի դերը վանկատման մեջ:<br>**Տարբերի** բաց, փակ վանկերը և դրանք գործնականում կիրառելու հմտություն ձեռք բերել վարժությունների միջոցով:<br>**Տարբերի** վանկը բառից: |
| 14 | Գիտելիքի ամրակայում. վանկ: **Ուսուցանող գրավոր աշխատանք:** | | **Կառանձնացնի** միավանկ և բազմավանկ բառերը:<br>**Կնշի** փակ և բաց վանկերը: |
| 15 | **Թեմատիկ գրավոր աշխատանք** | | |

| | | | |
|---|---|---|---|
| 16. | Հովհաննես Շիրազ 《Հավերժական վեճ》 | Ձևավորել արտահայտիչ ընթերցելու կարողություն | Պարզաբանել՝ ինչով է տվյալ առակն իր համար հետաքրքիր |
| 17. | Ուսուցանող գրավոր աշխատանք | | |
| 18. | Բառային շեշտ | Ծանոթացնել հայերենի շեշտի վերջնավանկային դիրքին | Բացատրել շեշտի ուղղագրական արժեքը |
| 19. | Գիտելիքի ամրակայում: Ուսուցանող գրավոր աշխատանք | | |
| 20. | 《Հայրն ու որդին》 ժողովրդական առակը Բառի կազմությունը | Նպաստել առաջին խրատական_դաստիարակիչ դերը ըմբռնելուն: Ծանոթացնել Բառի բաղադրիչներին | Արտահայտիչ և հասկանալով կարդալ առակը: Բացատրել բառերի կազմությունը: |
| 21. | Պարզ և բարդ բառեր: Հոլակապ | Մատչելի բացատրել պարզ և բարդ բառերի կազմության առանձնահատկությունները: | Առակում գտնել կազմությամբ պարզ և բարդ բառերը և գործածել գրավոր խոսքում: |
| 22. | Իվան Կռիլով 《Որսորդ աղյուծը》 Ածանց | Նպաստել չափածո առակի իմաստը ընկալելուն: Ծանոթացնել ածանցի տեսակներին | Թվարկել առակի հերոսներին: Տեքստում գտնել ածանց ունեցող բառերը, առանձնացնել ածանցները: Կատարել բառերի բառակազմական վերլուծություն: |
| 23. | 《Տունը》 առակը: Է(ե) ձայնավորի հնչյունափոխությունը | Հասկանալի դարձնել առակի բովանդակությունը: Նպաստել ընկալելու Է(ե) ձայնավոր հնչյունափոխությունը | Առակի բովանդակությունը վերադարձրել չափածոյով: Տեքստում գտնել Է(ե) ձայնավորի հնչյունափոխության կանոններին վերաբերող բառեր: |
| 24. | Ավետիք Իսահակյանի 《Կաքավն ու աղվեսը》 առակը: Ի ձայնավորի հնչյունափոխությունը | Զարգացնել ճիշտ և արտահայտիչ կարդալու կարողություններ: Նպաստել ի ձայնավորի հնչյունափոխության ընկալմանը: | Վարժ կարդալ և թվարկել 《Կաքավն ու աղվեսը》 առակում առկա հերոսներին:: Տեքստում գտնել ի ձայնավորի հնչյունափոխություն ունեցող բառերը, ցույց տալ հնչյունափոխությունը: |
| 25. | Ստուգողական գրավոր աշխատանք | | |
| 26. | Մխիթար Գոշ 《Ճնճղուկներն ու արագիլը》 առակը: Ու ձայնավորի հնչյունափոխությունը | Նպաստել հասկանալու առակի իմաստը: Նպաստել ու ձայնավորի հնչյունափոխության ընկալմանը: | Կարդալ և ցույց տալ առակում ներկայացված դեպքերի հաջորդական ընթացքը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Բացատրել ու ձայնավորի հնչյունափոխության հետ կապված օրինաչափությունները: |
| 27. | «Երեք ծառաների առակը» : Երկհնչյունների հնչյունափոխությունը | Ձևավորել և զարգացնել ակտիվ ընթերցող: Նպաստել պատմելու կարողությունները զարգացնելուն: Ծանոթացնել երկհնչյունների հնչյունափոխությանը : | Կարդալ առակը և մեկնաբանել սեփական դատողությամբ: Բացատրել երհնչյունների հնչյունափոխությունը և բերել համապատասխան օրինակներ: |
| 28. | Հովհաննես Թումանյանի «Գելը » պատմվածքը: Հոմանիշներ | Զարգացնել տեքստը հասկանալով ընթերցելու, պատմվածքի միտքն ընկալելու կարողություններ: Բառապաշարը հարստացնել հոմանիշ բառերով: | Առկայությամբ կարդալ տեքստը, հասկանալով: Վերաշարադրել տեքստը տարբեր հերոսների կամ կենդանիների անունից: |
| 29. | Ուսուցանող գրավոր աշխատանք | | |
| 30. | Ստեփան Զորյան «Ճեկոն» պատմվածքը: Հականիշներ | Նպաստել հասկանալ պատմվածքի արտահայտված իմաստը: Ծանոթացնել հականիշների բառագիտական նշանակությանը | Կարդալ տեքստը հասկանալով, մատնանշել պատմվող դեպքերի հաջորդական ընթացքը: Տեքստում գտնել հականիշներ՝ նշելով գործածության նպատակը: |
| 31. | Էդմոնդո դի Ամիչիս «Ջուլիո» պատմվածքը: Համանուններ | Նպաստել հասկանալու պատմվածքի իմաստը, հերոսների բնութագրմանը: Ծանոթացնել համանունների բառագիտական նշանակությանը: Ճանաչել նույնագիր համանունները: | Մեկնաբանել՝ պատմվածքում ժամանակաշրջանը, միջավայրը ինչ կերպ են ազդում հերոսների հոգեբանության վրա: Համանունները տարբերել բառերի մյուս տեսակներից: Տեքստում գտնել համանուններ: |
| 32. | Ուսուցանող գրավոր աշխատանք | | |
| 33. | Արթուր Մանուկյան «Մեր բակի պատմությունը» : Մակդիր | Նպաստել պատմվածքի իմաստը հասկանալուն, զարգացնել հասկանալով ընթերցելու, տեքստում գլխավոր միտքն արտահայտող, հերոսներին բնութագրող բառերն ու արտահայտությունները: Նպաստել ճանաչելու բառի ուղիղ իմաստը: | Արտահայտիչ, վարժ կարդալ տեքստը, պահպանել հայերենին հատուկ շեշտադրությունը: Տեքստում գտնել, բացատրել պատկերավորման միջոցների դերը տվյալ ստեղծագործության մեջ: |
| 34. | Հանրի Զարյան «Նա | Նպաստել հասկանալու | Տեքստը կարդալ |

| | | | |
|---|---|---|---|
| | 》 պատմվածքը: Համեմատություն Ձայնավորների արտասանությունը և գրությունը: | պատմվածքի իմաստը: Ծանոթացնել համեմատության կիրառման դերին: Ճիշտ կիրառել բանավոր և գրավոր խոսքում հայերենի հնչյունների ճիշտ արտաբերման կանոնների կիրառումը: | ուղղախոսական կանոններին համապատասխան: Թվարկել հերոսներին: Տարբերել հայերենի ձայնավոր և բաղաձայն հնչյունները: |
| 35. | Վիգեն Խեչումյան 《Չվարթնոց》: Ը ձայնավորի ուղղագրությունը | Օգնել ճանաչելու մեր ազգային արժեքները: Զարգացնել հասկանալով ընթերցելու, տեքստում գլխավոր միտքն արտահայտող բառերն ու նախադասությունները գտնելու հմտություն: | Կարդալ ընտրովի հատվածներ, բացատրել ընտրությունը: Գտնել տեքստի բանալի բառերն ու նախադասությունները: Կատարել ը ձայնավորի արտասանության և գրության հետ կապված վարժություններ: |
| 36. | Հովիկ Վարդումյան 《Երգը》 պատմվածքը: Երկհնչյունների արտասանությունը և գրությունը | Նպաստել ճանաչելու մեր ազգային արժեքները Ծանոթացնել յա_իա_եա երկհնչյունների արտասանության և գրության առանձնահատկություններին: | Մեկնաբանել պատմվածքի վերնագրի կապը բովանդակության հետ: Վերարտադրել պատմվածքում ներկայացված դեպքերը: |
| 37. | Ստուգողական գրավոր աշխատանք | | |